

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ
(Ս. Էջմիածին, 9 նոյեմբեր 1989 թ.)

Սիրելի բարեկամներ, այս պահին ես ինձ լաւ եմ զգում ձեր մէջ: Կարծում եմ, դուք էլ այս յարկի տակ ձեզ լաւ էք զգում և հարազատ:

Ողջունում եմ ձեր այցելութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ասացի այցելութիւն, գուցէ աւելի ճիշտ կը լինէր ասել, որ դուք եկել էք ուխտի: Ուխտ բառի իմաստը կարելի է տարածել մեր ամբողջ ազգի զաւակների վրայ, մանաւանդ երբ հարցը վերաբերում է Սուրբ Էջմիածնին:

Իմ հիշողութեան մէջ այս պահին արթնանում է մի պատկեր. 1945 թ. մայիսը, երբ ես, առաջին անգամ լինելով Ռումինիայից եկայ Հայաստան և Սուրբ Էջմիածին: Յիշում եմ, մենք՝ արտասահմանից եկող հոգևորականներս Երևանի «Ինթուրիսթ» հիւրանոցից շուրջ 20—25 հոգևորականներ, որոնք բոլորն էլ առաջին անգամ լինելով գալիս էին Երևան, ուղեւորուեցինք դէպի Ս. Էջմիածին: Զափագանց յուզուած էինք բոլորս: Երբ մեքենաներից իջանք և քայլելով մոտեցանք այս հազարամեայ տաճարի քարերին, համարեայ բոլորս արտասուում էինք: Յիշում եմ, Կալիֆոռնիայից եկող մի ծերունազարդ հոգևորականի, Վարդան Գասպարեան, չկարողացաւ ինքն իրեն զսպել, երբ մտնում էինք տաճարի մուտքից ներս, բարձրաձայն սկսեց լաց լինել, ծնկի եկաւ և համբուրեց սև քարերը այս տաճարի:

Իսկ հիմայ դուք էք ուխտի եկել այս սրբավայրը: Գուցէ ձեզանից ոմանք առաջին անգամ լինելով էք գտնուում Ս. Էջմիածնում, ներքին Սփիւռքից եկողներդ, դուք էլ ուխտաւորներ էք իբրև հայ ժողովրդի և Հայաստանեայց Եկեղեցու հարազատ զաւակներ: Մենք ուրիշ Եկեղեցիների նման հաւատաքննութեամբ չենք զբաղուում, բոլոր հայերին, լինեն հաւատացեալ կամ ոչ, բոլորին անխտիր նկատում ենք մեր Եկեղեցու հարազատ զաւակները: Ողջունում եմ ձեր կազմակերպութիւնը, ձեր Համազգային Շարժումը և ուրախ եմ, որ բաւականաչափ ներկայացուցիչներ գտնուում էք այսօր այստեղ: Պիտի փափագէի, որ ձեր մեկնումից յետոյ փոխանցէիք իմ ողջոյնի և օրհնութեան խօսքը նաև բոլոր նրանց, ովքեր չկա-

բողացան այստեղ լինել այսօր: Ես գիտեմ ձեր մասին ե զգում եմ ձեր սրտի տրոփիւնը, ձեր մտքերի թռիչքը ե ձեր ազնիւ սպասումները մեր ժողովրդի ներկայի ե ապագայի նկատմամբ: Ձեր կազմակերպութեան կամ շարժման հիմնական գաղափարը արտայայտուել է Համազգային բառով, ազգայինի գաղափարով: Եւ դա մեր սրտին շատ մօտիկ է: Չգիտեմ, դուք ինչքան ծանօթ էք մեր Եկեղեցու պատմութեանը, չգիտեմ ինչքան տեղեակ էք մեր Եկեղեցու իրագործումներին բազում դարերի ընթացքում՝ ազգայինի գաղափարը ամրապնդելու և իրականացնելու տեսակետից, բայց ուզում եմ ձեզ յիշեցնել, որ քանի դուք ազգի և ազգայինի մասին էք խոսում, զգաք, որ այս պահին դուք գտնւում էք ազգային գաղափարը ստեղծող և ձևակերպող պատմական հաստատութեան կենտրոնում: Հայ ժողովրդի ազգային դիմագծութիւնը, հայ ժողովրդի ազգային ոգեկանութիւնը, հայ ժողովրդի ազգային գաղափարախոսութիւնը դարբնուած է այստեղ, Սուրբ Էջմիածնում, մանաւանդ չորրորդ և հինգերորդ դարերում: Թող չկարծուի թէ ազգային գաղափարախոսութեան կազմաւորման հարցում Հայ Եկեղեցին ինչ-որ հետևորդ է կամ համաձայնող: Ոչ: Հայ Եկեղեցին հեղինակ է և առաջնորդող տասնեօթ դարերից ի վեր:

Մինչև չորրորդ դար, մինչև քրիստոնեութեան ընդունումը, անշուշտ հայ ժողովուրդ կար իբրև ֆիզիքական գոյութիւն, բայց նրա ազգային գաղափարախոսութիւնը, նրա ազգային ոգեկանութիւնը ձևակերպուած չէր դեռևս: Հայ ազգը ամբողջական իմաստով ծնունդ առաւ, կազմաւորուեց և սկսեց ճառագայթել իբրև ոգեկանութեան ուժ դարերի ընթացքում, երեք պատմական դեպքերով կամ տուեալներով: Առաջին՝ քրիստոնէացումով՝ 301 թուականին, երկրորդ՝ չորրորդ դարի սկզբին հայ գրերի գիւտով և հայ գրականութեան սկզբնաւորութեամբ և երրորդ՝ նոյն դարի կեսերին՝ Աւարայրի ճակատամարտով: Այս երեք տարեթուերը, այս երեք պատմական իրադարձութիւնները խարիսխ հիմքերն են, վէմն են հայ ժողովրդի ազգային գիտակցութեան կազմաւորման: Եւ այս երեք իրադարձութիւններն էլ կապուած են ուղղակի կերպով մեր Եկեղեցու հետ: Մեր Եկեղեցին է, մեր Եկեղեցով է, որ քրիստոնէութիւնը վերջնականապէս տարածուեց Հայաստան աշխարհի վրայ, ամբողջ պատմական Հայաստանի վրայ: Քրիստոնէութեամբ կազմաւորուեց հայ ժողովրդի բարոյական նկարագիրը և ոգեկանութիւնը: Երկրորդ վճռական իրադարձութիւնը եղաւ հինգերորդ դարի սկզբին, Ս. Մեսրոպի մեծ գործը՝ հայ տառերի գիւտով, թարգմանիչների Ս. Գրքի թարգմանութեամբ հայերէն լեզուով, որ աշխարհի ամենակատարեալ թարգմանութիւններից մէկն է, մեր ժողովրդին պատիւ բերող աշխարհի առաջ: Այդ օրերից է, որ վերջնականապես կազմաւորուեց հայ ժողովրդի ազգային հոգին և սկիզբ առաւ հայոց ոգեկանութիւնը: Եւ վերջապէս, էլի Սուրբ Էջմիածնից ճամփայ ընկաւ սուրը ձեռքին Վարդան Մամիկոնեան դէպի Աւարայրի դաշտ: Վարդանանց պատերազմը կրօնական-ազգային պատերազմ է: Երբեմն անցեալում սխալ մեկնաբանութիւններ են եղել այստեղ: Իրականութեան մէջ, ինչպէս Եղիշէ պատմիչ իր նշանաւոր պատմութեան գրքում է յիշում, Վարդանանց պատերազմը մի պատերազմ էր վասն հաւատոյ և վասն հայրենեաց ազատութեան: Եւ Վարդանանց պատերազմը ոգեշնչողը, նոյնիսկ սկզբնաւորողը, կարող եմ ասել, Վարդանից առաջ, եղել է Ղևոնդ երէց քահանան: Նոյնիսկ կարող եմ ասել, թէ Վարդանը հետևեց Ղևոնդ քահանայի կոչին:

Այսպէս ահա, այս երեք հիմնական իրադարձություններն են, որոնք

վերջնականապէս կազմաւորեցին հայ ժողովրդի ազգային գաղափարախոսութիւնը, ոգեկանութիւնը, ծնունդ առած Ս. Էջմիածնից, Հայ Եկեղեցու կենտրոնից: Յետագայ դարերին, 5-րդ դարից յետոյ, մինչև մեր օրերը, մինչև Նարդարապատի ճակատամարտ, բոլոր մեր պատմութեան կարևոր իրադարձութիւնները հիմնուած են եղել այս երեք սկզբնական, խարիսխ զգացմունքների, խարիսխ հոգևոր հիմքերի վրայ՝ քրիստոնէական հաւատք, ազգի գիր-գրականութիւն և մշակոյթի պաշտպանութիւն, հայրենիքի ազատութիւն:

Ես կարծում եմ, որ հիմայ էլ, երբ նոր պայմաններ են ստեղծուել Խորհրդային Միութեան մէջ, այս ճշմարտութիւնները պէտք է աւելի ուժգին կերպով դրսևորուեն ու ընդգծուեն, որպէսզի մեր ժողովուրդը ոչ միայն հիշտ հասկանայ Հայ Եկեղեցու ինչ լինելը, ոչ միայն ճիշտ հասկանայ մեր ազգային գաղափարախոսութիւնը, այլ նաև ճիշտ հասկանայ ինքն իրեն իբրև հայ մարդ, թէ ով է ինքը որպէս հայ մարդը այս աշխարհում և ինչ կոչում ունի այսօր մեր օրերի պայմաններում, և ինչ երազանքներ դէպի մեր ապագան:

Մեր Եկեղեցին, Սուրբ Էջմիածնի գլխաւորութեամբ, վստահ եղէք, միշտ պատրաստ է իր թևերը, իր սիրտը լայն բաց անելու այն բոլոր հայերի առաջ՝, բոլոր այն կազմակերպութիւնների, որոնք այս ոգեկանութեամբ, այս ուղիղ հասկացուած ազգայինի գիտակցութեամբ պիտի կամենան մտածել, խոսել և գործել: Այս ոգին, այս հոգևոր-ազգային գիտակցութիւնը մեր Եկեղեցին պահպանել է նաև այս վերջին տասնամեակներին այստեղ, Խորհրդային երկրում, նոյնիսկ անձի պաշտամունքի վատ ժամանակներում, թէև կղզիացած պայմաններում, բայց միշտ այս ոգու ճրագը վառ է պահել Հայ Եկեղեցին Սուրբ Էջմիածնում և արտասահմանում: Իսկ պատերազմից յետոյ, երբ կացութիւնը բաւական բարելաւուեց Եկեղեցու տեսակետից, յատկապէս վերջին 80—85 տարիների ընթացքում, իմ շրջանին կարողացանք յիշատակութեան արժանի գործեր կատարել, վերաշինելով մեր եկեղեցական կեանքը Հայաստանում: Բազում վանքեր, եկեղեցիներ վերանորոգուեցին ու բացուեցին, որոնց մասին դուք գիտէք: Ահա այդ հիմնական աշխատանքն է, որ մենք շարունակեցինք: Դուք հաւանաբար ծանօթ էք նաև Մայր Աթոռիս վերջին 80 տարիների հրապարակաւ արտայայտութիւններին, իմ քարոզներին, կոնդակներին, կոչերին, որով դուք հստակ կերպով պէտք է հասկացած լինէք, թէ անշեղ կերպով Ս. Էջմիածինը նոյն ճանապարհով է ընթացել: Թոյլ տուէք մի քիչ անհամեստութիւն անել գուցէ, ասելու, որ Հայաստանի հողամասի վրայ մեծ Եղեռնի առաջին յուշարձանը կառուցեցինք Ս. Էջմիածնում, յետոյ մեր օրինակին հետևեց մեր հայրենի կառավարութիւնը բարեբախտաբար և՝ հոյակապ կոթողը Ծիծեռնակաբերդի:

Երկրորդ՝ երկար տարիներ Սարդարապատի ճակատամարտի մասին մեզ մօտ չէր խօսւում, մոռացութեան էր տրուել: Այս հարցում էլ առաջին անգամ լինելով Հայաստանում, Սարդարապատի ճակատամարտը հռչակուեց հրապարակաւ՝ Վազգէն կաթողիկոսի կոնդակով: Ես սրանով ուզում եմ ցոյց տալ մի անգամ ևս, որ ոչ թէ ես միայն անձնապէս, այլ մեր Եկեղեցին իր ամբողջականութեան մէջ, ազգային ոգու դրօշակակիրն է մնացել նաև վերջին տասնամեակների ընթացքում, թէ այստեղ, թէ արտասահմանում:

Արտասահմանում, ուր աւելի քան երկու միլիոն հայեր են ապրում, տարբեր երկրներում, խօսքը արտաքին Սփիւռքի մասին է, հիմնական հայկական ազգային կազմակերպութիւնը Եկեղեցին է: Կարելի է ասել առանց շփոթուելու, որ արտասահմանում Հայ Եկեղեցին հայութեան կեանքի ողնաշարն է: Ճիշտ է, կան բազմաթիւ տարբեր կազմակերպութիւններ, կուսակցութիւններ, բոլորը իրենց գոյութեան իմաստը ունեն, սակայն հայութեան կեանքի հիմքը՝ գործնականօրէն և իրականօրէն մնում է Հայ Եկեղեցին: Ահաւասիկ, ի՞նչ է նշանակում Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի, և ի՞նչ է նշանակում նրա պատմական կենտրոնը՝ Ս. Էջմիածին:

Դուք մի նոր շարժման անունով հանդէս էք գալիս և սկսում կազմակերպուել ե պիտի շարունակէք զարգանալ, ինչպէս այստեղ, գուցէ նաև արտասահմանում, մանաւանդ ներքին սփիւռքում:

Բնականաբար, մեր ժողովրդի ծոցում ամէն հայ մարդ միակերպ չի մտածում տարբեր հարցերի մասին, ազգային հարցերի, քաղաքական հարցերի, ընկերային հարցերի, տնտեսական հարցերի վերաբերեալ, ոչ այստեղ, ոչ էլ արտասահմանում: Եվ դա բնական երևոյթ է: Երեկ, մի բարեմիտ հայրենակից ինձ հարցնում էր, հիմայ, որ տարբեր շերտաւորումներ, հոսանքներ կան մեր ժողովրդի ծոցում և այստեղ և արտասահմանում, Եկեղեցին ո՞ւմ կողմը պիտի լինի: Ես ասացի՝ Եկեղեցին ոչ մի կողմի հետ չէ, Եկեղեցին բոլոր կողմերի հետ է: Ուրիշ խօսքով, Եկեղեցին միասնութեան գաղափարի վրայ կանգնած է և պէտք է կանգնած մնայ: Ջի Եկեղեցու կոչումն է լինել հաշտարար ու խաղաղարար կամուրջ կողմերի միջև:

Հարց կը ծագի՞ ի՞նչ պէտք է հասկանանք միասնութիւն ասելով: Իմ ըմբռնումով՝ միասնութիւնը շատ ցանկալի է, բայց այդ պէտք չէ հասկանալ իբրև բացարձակ միակերպութիւն: Ինչպէս ամէն ժողովրդի կեանքում, նաև մեր ժողովրդի հասարակական կեանքում կարող են լինել և լաւ է, որ լինեն տարբեր հոսանքներ, տարբեր մտածելակերպեր, միևնոյն բարի նպատակի, Ազգի և Հայրենիքի օգտին: Արտասահմանում էլ անկարելի է, որ բաոի ամբողջական իմաստով հայութիւնը լրիւ միասնական լինի: Դա հնարաւոր չէ պարզապէս: Ով որ այդպէս է կարծում, նշանակում է չի ճանաչում Սփիւռքը: Հետևաբար բազմազանութիւնը կայ ու պիտի մնայ անհրաժեշտաբար: Իմաստութիւնը նրանումն է, որ այդ բազմազանութեան մէջ կարողանանք այնուամենայնիւ պահպանել որոշ միասնութիւն հիմնական հարցերի նկատմամբ, բախտորոշ հարցերի նկատմամբ: Մեր ժողովրդի և մեր հայրենիքի ապագայի բախտորոշ հարցերի վերաբերեալ: Նոյնիսկ իմ միտքը աւելի առաջ է գնում և մի համարձակ կարծիք եմ ուզում արտայայտել. երբեմն ժողովուրդների պատմութեան կեանքում, նոյն ժողովրդի զաւակներ կամ խմբաւորումներ կարող են անջատ քայլել, բայց միատեղ հարուածել: Անջատ քայլել, բայց միատեղ հարուածել: Երանի թէ մեր ազգի զաւակները, ի Հայաստան և ի Սփիւռս աշխարհի, հասնէին այդ՝ քաղաքական, հայրենասիրական մտածողութեան և գործելակերպի հասունութեան: Կ'ուզէի աւելացնել նաև, ուրիշ մի բանաձևում նոյն ճշմարտութիւնը արտայայտող, այս անգամ կրօնական կեանքում յանախ յիշուած, այն է՝ ազատութիւն յերկրայականս, միութիւն ի կարևորս, սէր յընդհանուրս: Սա նշանակում է՝ ազատութիւն մտքերի, խօսքի արտայայտութիւնների մէջ, բայց միութիւն հիմնական հարցերում, այսինքն միասնութիւն,

և սեր ընդհանուրի, բոլորի վրայ տարածուած, միմեանց հանդէպ: Առանց թշնամական զգացմունքների մէկը միւսի նկատմամբ: Սա էլ շատ կարևոր է: Կարող ենք համաձայն չլինել բոլորս այս կամ այն տեսակետի վրայ, դիճելի հարցեր կը լինեն միշտ, բայց թշնամիներ չպիտի լինենք: Եւ իսկական դեմոկրատիայի ոգին այս է, այլապէս դեմոկրատիան չիք կը դառնայ, եթէ ամէն մէկը ուրիշ կարծիք ունեցողի նկատմամբ անհանդուրժող ոգի ցուցաբերի, դա դեմոկրատիա չէ արդեն, այլ դէպի դիկտատուրայ կը տանի:

Արդ, որո՞նք են այն հիմնական հարցերը, որոնց շուրջ անհրաժեշտ է, որ միասնութիւն լինի, այլազանութեան մէջ միասնութիւն, մեր այսօրուայ ազգային կեանքում: Իմ կարծիքով, երեք հիմնական հրամայականներ հարկ է նկատի ունենալ:

Առաջին՝ ապահովումը և ամրապնդումը մեր հանրապետութեան քաղաքական անվտանգութեան: Սա ես նկատում եմ վճռական տուեալ, մանաւանդ մեր երկրի աշխարհա-քաղաքական դիրքը նկատի ունենալով: Շատ զգոյշ պէտք է լինենք ու իրատէս: Եւ ամէն գնով, ինչպէս էլ մտածենք, պէտք է նախ և առաջ մտահոգուենք պահպանումովը և ամրապնդումովը մեր մայր հայրենիքի քաղաքական անվտանգութեան:

Երկրորդ՝ ապահովումը մեր երկրի տնտեսական վերակառուցման և զարգացման: Տնտեսական ասելով հասկանում եմ՝ հողագործութիւն, արդիւնաբերութիւն, և վերաշինութիւն, մանաւանդ այս անաւոր աղէտից յետոյ: Կենսական նշանակութիւն ունի մեր երկրի տնտեսական վերականգնումը: Մենք չենք կարող գոյատևել այս վիճակով: Մանաւանդ հիմա, երբ բարեբախտաբար նոր հնարաւորութիւններ են ստեղծուում արտասահմանեան՝ հայ և ոչ հայ առևտրական կամ արդիւնաբերական կազմակերպութիւնների հետ գործարքներ կատարելու, եթէ կարողանանք օգտագործել այդ հնարաւորութիւնները, ապա իրապէս տնտեսական մեծ անանխընթաց իրագործումներ կարելի կը լինէր կեանքի կոչել:

Երրորդ հիմնական տուեալը անհրաժեշտութիւնն է միասնութիւն ստեղծել ազգային մշակոյթի ծաղկումը զարգացնելու համար մեր մայր հայրենիքում: Մենք, մի քանի հազար տարիներից ի վեր, մշակոյթի ժողովուրդ ենք: Դա մեր պարծանքներից մէկն է: Մենք հայերս, մշակոյթի այնպիսի արժէքներ ենք ստեղծել համաշխարհային պատմութեան մակարդակի վրայ, որ արժանի ենք կոչուելու մշակոյթի ստեղծող ու մշակոյթ կրող ժողովուրդ, թէ մեր գիր ու գրականութեամբ, թէ մեր Եկեղեցիով, թէ մեր ճարտարապետութեամբ և թէ մեր մանրանկարչութեամբ և մեր սքանչելի կրօնական ու ժողովրդական երաժշտութեամբ և այլ արուեստներով: Եւ յիշեմ մի նշանաւոր խօսք եւրոպացի պատմաբանի, անցեալ դարի վերջերին, որը ասում է՝ աշխարհում չկան ժողովուրդներ, կան մշակոյթներ: Ուզում է ասել, կան ժողովուրդներ, բայց իսկական ժողովուրդ են նրանք, ովքեր մշակոյթ են ստեղծել, ոչ թէ ուրիշի մշակոյթն են կողոպտել, ինչպէս ոմանց պարագան է: Եւ մեր ժողովուրդը մշակոյթաստեղծ ժողովուրդ է եղել ի սկզբանէ, մանաւանդ, ինչպէս քիչ առաջ յիշեցի չորրորդ դարից այս կողմ:

Հետևաբար, այսօր էլ մենք պէտք է հանդէս բերենք մեր ամբողջ ճիգը, ուժը, հանճարը, որպէսզի շարունակենք այս աշխարհի վրայ մեր փոքր այս հայրենիքի տարածքի վրայ պահպանել մեր պատուաբեր տեղը, բարձր պահելով ազգային մշակոյթի ջահը: Ազգային մշակոյթի զարգացման ճա-

նապարհի վրայ անշուշտ, վճռական դեր ունի մեր մայրենի լեզուն, հայերէն լեզուն, որի ջատագովն էք նաև դուք, և ձեր ծրագրում արձանագրել էք յատկապէս հայ լեզուի մասին ինչ որ անհրաժեշտ է: Մեր լեզուն մեր մշակոյթի ամենակարևոր հարստութիւններից մէկն է: Հայ ժողովրդի իսկական ստեղծագործութիւնն է: Հայ ժողովրդի հոգու պատկերը կայ մեր մայր լեզուի մէջ: Առանց հայ լեզուի դժուար է հայ մնալ և գոյատևել, չասելու համար, որ անկարելի է: Վերջին 60—70 տարիների ընթացքում այնքան էլ տիրական կեցվածքով մեր երկրում չպաշտպանուեց հայերէն լեզուն: Նոյնիսկ ես երբեմն հանդիպել եմ ծնողների, որոնք իրենց երեխային հայերէն դպրոց չեն ուղարկում, հայերէն լեզուն նկատելով մեռեալ լեզու: Սա անշուշտ ցաւալի երևոյթ է: Ահա դժբախտ մտայնութիւն ոմանց մէջ: Ես ռուսերէն լեզուին բոլորովին հակառակ չեմ: Ես մեծապէս գնահատում եմ ռուսաց լեզուն և գրականութիւնը, որին ծանոթ եմ ռումիներէն թարգմանութեամբ: Կասկած չկայ, որ ռուսերէն լեզուն, գրականութիւնը միջազգայնօրէն յարգանքի արժանի են: Բայց այդ բնաւ չի նշանակում, որ մենք մեր լեզուն նկատենք ինչ-որ մի տեսակ երկրորդական կամ մեռեալ լեզու, կամ անկատար լեզու: Հայերէն լեզուն դա մեր էութիւնն է, մեր արժանապատուութիւնն է, մեր ինքնութիւնն է, մեր մշակոյթի աղբիւրն է և մեր հոգեկան բոլոր սպասումների դրսևորման ձևն է: Մենք չենք կարող ապրել առանց մեր մայրենի լեզուի: Իմ կարծիքով, աստիճանաբար, յատուկ ինչ-որ քաղաքականութիւն պէտք է որդեգրել, որպէսզի հայերէն լեզուն հետզհետէ ոչ միայն ընտանիքներից ներս, ոչ միայն հայկական դպրոցներում, այլ նաև հիմնարկներում, աշխատանքի վայրերում դառնայ գործնական լեզու, ռուսերենն էլ լաւ սովորելով և պահպանելով որպէս ազգամիջեան յարաբերութիւնների լեզու Խորհրդային Միութեան մէջ: Ու աւելին, ցանկալի է, որ հայաստանցի մտաւորականը ազատ խօսի ոչ միայն հայերէն և ռուսերէն, այլ նաև գոնէ մի երրորդ արտասահմանեան լեզու ևս: Հայ մարդը պէտք է կարողանայ աշխարհի հետ խօսել:

Ողջոյնի յատուկ խօսք ունեմ ուղղուած ներքին Սփիւռքի ներկայացուցիչներին: Վերջապէս ժամանակն է, որ ներքին Սփիւռքի հայութիւնը ոտքի կանգնի: Փառք Աստուծոյ, հիմայ արդէն շարժումը սկսել է: Ես յատուկ ողջունում եմ ներքին Սփիւռքի ներկայացուցիչներին և մաղթում եմ ուժ, եռանդ, քաջութիւն, որպէսզի կազմակերպուեն և իրենց խօսքը ասեն մեր ժողովրդի կեանքում: Եթէ չեմ սխալւում, աւելի քան մէկ միլիոն հայութիւն ունենք ներքին Սփիւռքում: Բայց կազմակերպութիւն է պէտք, աշխատանք է պէտք, ուիրում է պէտք, սէր է պէտք և հաւատ: Հիմայ այդ հնարաւորութիւնները կան, պէտք է օգտուել: Ինչպէս նախկինում, առաջին համաշխարհային պատերազմից առաջ, ներքին հզօր Սփիւռք ունէինք Ցարական Ռուսաստանի տարածքի վրայ: Նոյնիսկ արևելահայոց մեր մշակոյթը իր վերածնունդը ստեղծեց և զարգացրեց ներքին Սփիւռքում՝ Թիֆլիսում, Ռոստովում, Մոսկուայում, Աստրախանում, Արցախում և այլ վայրերում: Ո՞ւր են այդ հայերը հիմայ: Ես հրաւիրում եմ ոտքի կանգնել ու միասնաբար աշխատել, մշտապէս կապի մէջ մայր երկրի և Ս. Էջմիածնի հետ: Սա շատ կարևոր հարց է ներկայի և ապագայի համար:

Սփիւռքի հայութիւնը անբաժանելի մասն է մեր մայր երկրի ժողովրդի, ինչպէս ներքին Սփիւռքը, այնպէս և արտաքին Սփիւռքը: Իմ խօսքը կամենում եմ վերջացնել մի յայտարարութեամբ, այն է՝ քաջալերելու համար հայ լեզուի օգտագործումը ուսումնական և այլ հաստատութիւններում,

Հայաստանի գրչի Արվեստների ԵՐՐ

ցանկանում եմ նուիրաբերել հարիւր հատ հայերէն գրամեքենայ, տրամադրութեան տակ ձեր նորընտիր վարչութեան:

Մաղթում եմ բոլորիդ ուժ, եռանդ, ներշնչանք, որպէսզի շարունակէք ձեր առաքելութիւնը համբերատարութեամբ, քաջութեամբ, հաւասարակշռութեամբ, և իմաստութեամբ, որպէսզի ամէն ինչ իր բնականոն հունով, քայլ առ քայլ իրականանայ, ի փառս մեր ժողովրդի և մեր վերածնուած Մայր Հայրենիքի:

Սէր և խաղաղութիւն և օրհնութիւն ընդ ձեզ այժմ և յաւիտեանս. ամէն: